



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55րդ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 10

26 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Կիրին Դերը Գննադատութեան մէջ
 Կիւսքալ Ֆլայէրի **Մասամ Գովառիէն**
 Անգլա Պասմուտմի մի
 Դաւառական Բանաստեղծութիւն
 Սիւլի Բիւսուֆի Երազը
 Ալեկոմութիւն
 Պիսի Սպասեմ . . .
 Հրաւերը [**Երական Պասմութիւն**]
 Բնութեան Վրձիւնը [**Գնայք**]
 Սիրոյ Բնագանցութիւնը
 ԶԱՐԵՂ ՆԵՄՅԷ
 Զիւնին Հեփաքը
 Կեանքը
 Երազ մը

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴ. ԳՈՒՇԱԿԵԱՆ
 ԹԼԿԱՏԻՆՅԻՆ
 ՅՈՎԶ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
 ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ
 Ռ. ՍԵՒԱԿ
 ՄԱՆՆԻԿ Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
 ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ

ԱՐԹՈՐ ԾՕՔԷՆԶԱՌԷՐ-Ի
 ՄԵԼՔՈՆ-ԱՍԱՏՈՐԻ
 ՅՈՎԶ. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ
 ՍԻԼԼԻ ԲՐԻԻՏՈՄ

30 ՈՍՄԿԻ ՊԱՐԳԵՒ

ՏԵՍՆԵԼ ԹԻՒ 7 "ՄԱՍԻՍ"Ը

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳ.Բ. ՃԻՀԱՆ

1908

THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

OF THE

Ճ. ՍԻՄՕՆ.

Բարիկ



ՔՐԵՄ

ՍԻՄՕՆ

Կիսերինս ցանկացած
 եւ սուսնց որ եւ է հաւաքական խզի
 Լուսաբան արաւարտութիւնն է
 ան՝ պահպանելու համար ԴԵՄ-
 ՔԻՆ ՈՒ ՉԵՌՔԵՐՈՒՆ
 Ճերմակութիւնը

1900ին բարիկեան ոսկի շնորհով

Քրեմ Սիմոնը մօրթը կը պահպանէ օղին ազդեցութեան դէմ .
 ճաթառու քննութեան , կարմրութիւններուն եւ խորշակահարութեան
 առաջքը կ'առնէ :

Եթէ վրայէն Սիմոնի բրնձափոշիի թեթեւ խաւ մը քսուի ,
 դէմքի գոյնին երիտառարդութեան շլացուցիչ փայլ մը կու տայ :
 Պէտք է ամէն օր գործածել դայն , թաց լաթով մը մօրթին վրայ
 տարածելով եւ յետոյ մեղմ չփռւածով մը ներս թափանցել տալով :
 Ճարպային ոչ մէկ մօրթին հարմարեցնելով , ամբողջովին կը
 լուծուի ջուրին մէջ :

ՄԵԴԱՆ Է ԱՆ ՈՐ ԸՆԳՈՒՆՈՒՄՆ ԸՂԼՍՅ ԲՈՂՈՐ ԳԵՂԱՆԻ ԳԵՐԱՍԱՆՈՒՆԻ-
 ՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ :

1860ին հնարուած , խկապէս առողջապահիկ ու ամենաառաջ-
 նակարգ Քրեմն է սննդաւորութեան : Բովանդակ աշխարհի մէջ
 իր ունեցած յաջողութիւնը առաջ բերած է բազմաթիւ կեղծեր ,
 որոնցմէ պէտք է խորշիկ ու խոյս տալ :

Քրեմ Սիմոն , բրնձափոշի Սիմոնը եւ Սիմոնի
 օճառը կը դնուին զեղարաններուն , անուշահոտու-
 թեան վաճառատուններու եւ պազարներու մէջ :

Գնած տեւն պէտք է լաւ ֆնէլ վանստանքը՝ որ պէտք է բլայ
 քովի պահելին նիւթս նմանը ,





ՅԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎԻՔ ԱՐՄԵՆ

ԾԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 10

26 ՅՈՒՆՎԱՐ 1908

ԿԻՐՔԻՆ ԴԵՐԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Քննադատ, քննադատութիւն, խժրժանք. — որչափ առատ է այս բերքը մեր մէջ, ո՛չ միայն լրագրութեան էջերում, այլ ամէն ո՛ւր որ կ'ուզէք: Բայց մանաւանդ լրագրութիւնը յուռթի է այդ կոչնականներով, որոնց շատին պիտակը կը հերքուի խարդախուած ներքինով: Քննադատներ կան՝ հանրային բարոյականին ուղղումը ստանձնող, — ուրի՛շ բան որ՝ նոյն ինքն իրենց անձը առաջին տիպարը ըլլայ սայթաքած բարոյականի մարմնաւորումին: Գրական դաւանանքներու ուղղիչ քննադատներ կան՝ իրենց գործովը իսկ մոլորանքի ուղղութիւնը գծող: Եւ քննադատներ՝ գրական հրատարակութիւններու յաջողութիւնը կամ անյաջողութիւնը վարդապետող, վճռական ու գահավէժ պատգամախօսութիւններով: Ու ասոնց բոլորին մէջ, փոխան ճշմարիտ քննադատութեան ազնիւ ոգին ու ձգտումը շեշտող ճշմարտագաշտ, անկեղծ, մաքուր սեւեռամտածումին, կիրքին յուղումը, որ գաղտագողի, անսանձ խոյանքով, յախուռն ու անշրջահայեաց՝ կ'ալեկոծի՝ մտրակը ձեռքը պոսպոսող գրիչին հոգիին մէջ, գլխիվեր կը ցցուի լեզուին ծայրը, կը փոթորկէ սիրտը, պղտորելով իր հաւատքը և ժնացնելով արժէքը իր դատումներուն: Եւ ա՛լ, քննադատին տեղ, որ ճշմարտութիւնը հռչակելու, չիտակը ցուցնելու, գեղեցիկը խուզարկելու ազնիւ

դերովը պէտք էր ոգևորուած ըլլալ, կը խօսի կիրքովը կուրցած անհաւատարակչիւ իմացականութիւնով Սոփիաարը, որուն գաղտնիները, վճիռները, հաստատարանութիւնները՝ կը դառնան մտտի ճամբարտակութիւններ, զերծ կշռադատուելու, հաշիւի տաճուելու իրաւունքէն : Եւ, այս ճամբով, գրախօսական քննադատութեան անունով, կը լուծուին գրական հին ժրէմներ, հնարաւոր ամէն ոչնչախօս խճճման քննարով, կարելի ամէն՝ ունայնապաշտ թծախնդրութիւններով, մինչև ստորակէտ մը եւ սպազրական սխալ մը՝ հսկայ պարտաւանքներու աւելցատանութիւնովը դատապարտելու աստիճան : Գրիչը, ձեռքն է, կը գրէ՝ պարոն քննադատը : Մէկուն ճակատին հանճարի գաղնիին կ'անցորէ, ուրիշ մը պաշտօնանկ կ'ընէ իր բանաստեղծի տխուրսն : Երրորդի մը գրական տաղանդին մահագուժը կը խմբագրէ, իր նախասիրութիւններուն, հաշիւներուն, նկատումներուն, օրուան սպաւորութիւններուն եւ զգայութիւններուն համեմատ, ազայական խճճման քննարով, բռնագրօսիկ քաշքշուքներով, եթէ տրամագրուած է եւ գիտակցօրէն կանխապատրաստուած՝ զէշ խօսելու, վարկ աւելու, ժրէմ լուծելու :

Գրախօսական քննադատութեան մը անունով բանասիրութեան այս նպատակաւոր ցոյցերուն չէ՞ որ ականատես կ'ընէ իր ընթերցողները՝ այս օրեր բանաստեղծութեան [ինքնա]պսակաւոր կրիտիկոս մը, որ իրեն բան գործ ըրած է քննադատական յօդուածներ հասցնել բանաստեղծական դրօժերու վրայ, մասնաւորապէս զինուած զրօղի մը գէմ, որուն երեք տարի առաջուան մէկ հրատարակութեան [Անրջանկ] վրայ ալ նո՛ր միտքը ինկեր է խօսիլ, —մերկապարանոց ու վրան բաց պատրուակ մը՝ ձեռք տունելու համար նաեւ անոր նոր գործը, ուր իրեն ինկեր է հաստատել թէ՛ գիրքին հեղինակը «բանաստեղծ» հռչակուելու համար զարմացական նշանի մը պէտք ունի քովը : Այն բանաստեղծ Փօլանճեանը, որ Պարսամեանը բանաստեղծ անուանելու համար զարմացական նշան մը կը սահեցնէ իր սրտակումին քով, նենգաւոր, չարամիտ, դուաղիւր սա զարմացականը Փօլանճեան բանաստեղծին !

Կը ականհմ որ այդ չարանենգ զարմացականի իր կախարդական ու պղծարար դերը կատարեց Փօլանճեանին նալ անունին քովը :

Բայց ինչո՞ւ անհաշտ ըլլայ այդ ծաղրածու, թունալից, սողոսկուն նիւը, իր խարդախ ցցուածքովը ա'յնչափ խօսուն կերպով ուրացող ու աւերիչ տառը՝ մտերմութեանը Փօլանճեանին, երբ ինք անխորհրդաբար կը վալկեցնէ զայն բանաստեղծի մը՝ որուն աւելի անհաշտ կը մնայ :

Հին հաշիւներու խոհմ մուացումով եւ քիչ զոհուելով քննադատականներով գրական ժրէմներ լուծելու մօլար քննախնդրութեան, քննադատներ աւելի հեղինակաւորապէս պիտի կրնային արժեցնել իրենց խօսքը, նախադրածով ու վաւերացնելով անկեղծութիւնը իրենց ձայնին եւ ճշմարիտ, աղնիւ, բարերար կոչումը, զերը Քննադատութեան :

ԵՆՈՎՔ ՍՐՄԷՆ

Ո Ճ Ի Ն Մ ՈՒ Շ Ն Ե Ր

ԿԻՒՍԹԱՎ ՖԼՈՊԷՈՒ «ՄԱՏԱՄ ՊՈՎԱՌԻ» ԷՆ

ԱՆՁԱՏ ՊԱՏՄԱՌԱԾՔ ՄԸ

ՆՈՐՄԱՆՏԱԿԱՆ ՀԱՐՍՆԻՔԸ

Կոչնականները կանուխ հասան կառքերով, միաձի սայլերով, երկանիւ բաղդոնակառքերով, անձաձկոյթ թրթրակներով, կաշիէ վարագոյրներ կախուած բեռնակիրի պարզ կառքերով. իսկ մօտակայ գիւղերուն երկառասարկները՝ սրարչաւ սալլակներով, ամէնքն ալ մէջը կարգով ոտքի կիցած ու չիյնալու զգուշութիւնով՝ ձեռքերով երկու կողմի փայտերուն յեցած ։ Ծառ մարդիկ եկան, մինչեւ տասը փարոսա հեռու տեղերէ ։ Հրաիրուած էին երկու առներուն բոլոր ազգականները, բարեկամներուն հետ այդ առիթով հաշտուած և մոռցուածներուն ալ տոմսակներ զրկուած էին ։ Ասին ստեն ցոնկապատէն դուրս՝ խարազանի ձայներ կը լսուէին ։ Քիչ հաքը՝ պատնէշին դուռը կը բացուէր և ներս կը մտնէր կառք մը, մինչեւ դաւիթին դուռը կը վազէր քառատրոփ ու հոն յանկարծ կը կենար. մէջի մարդիկը չորս կողմէն կը պարպուէին, ծունկերին չփելով և բազուկներին ձկտելով ։ Տիկինները, զլխարկաւոր, քաղաքացիի չըջաղեաւներով, վիզերին մամայոյցի ոսկի չղթաներով, կրծկալներով՝ որոնց ծայրերը դօտիին մէջ կը խօթուէին խաչածու. և պարանոցի դունաւոր թաշկինակներ կը ծածկէին անոնց ծոծրակները ու թիկունքին վրայ կը բռնուէին գնդաւսեղներով ։ Պզտիկ լաճերը, հօրերնուն պէս հագուած, կարծես կը նեղուէին իրենց նոր զգեստներուն մէջ ։ Անոնցմէ շատերը տաւջին անդամը ըլլալով այդ օրը մուճակներ ունեցեր էին ։ Անոնց քովէն լուիկ մնջիկ կը քալէին երկայն ճերմակ չըջաղեաւներ հագած տասնըչորս տասնըվեց տարեկան հասակաւոր աղջիկներ, հաւանաբար իրենց երէց քոյրերը, ամօթխած, կարմրերես, վարդաշուրով օձաւած խիտ մազերով, ձեռնոցնին աղտոտելու վախէն զգուշաւոր ։ Եւ որովհետեւ չունէին յատուկ ծառաներ՝ կառքերը լծիով ընելու համար, թեւերնին հանգրիճելով, պարոնները անձամբ կատարեցին այդ դօրծը ։ Իրենց ընկերական զանազան վիճակներուն համեմատ, անոնք ունէին զգեստներ, թիկնոց, բաճկոն, տաբատ, և այն ամէն պատուաւոր հանդերձները, որոնք հանդիսաւոր օրերուն մէջ միայն դուրս կը հանուէին գզրոցներէն, միկնոցակներ՝ հովէն տարուբերող երկայն ծայրերով, գլխաձեւ ձեռքով և տոպրակի չափ լայն դրոպաններով, հաստ տուրիէ շինուած թիկնոցներ՝ որոնց սովորաբար կը կցուէր արոյրի թերթիկներ ։

րով եղերուած գլխու պահպանակ մը , կարճ բաճկոններ՝ որոնց կոնա-
կին վրայ գոյգ մը կոծակներ կային , աչքերու չափ իրարու մօտ կար-
ուած և որոնց ծալքերը կարծես միակ ծալքի մը վերածուելով մէ'կ
անգամէն կտրուած էին ատաղձագործի ուրաքով . ոմանք ալ հագած
էին հիւրամեծարի լօղիկներ , օձիքը ուսերուն վրայ կոտրած , թիկունքը
մանր ծալքերով կծկուած և կէս մէջքէն՝ կտրուած զօտիով մը բռնուած :

Ու չապկանները զրահի պէս կ'ուռէին անոնց կուրծքերուն վրայ :
Ամէնքն ալ դեռ նոր և այնչափ տակէն կտրած էին մազերնին որ՝ կար-
ծես ականջները գլուխներէն կը փախչէին : Մէկ քանիին ալ , որոնք
չառ կանուխ ելած ըլլալով ժամանակ չէին ունեցած մօրուքնին շակե-
լու , քիթին ներքեւ կամ ծնօտին վրայ չեղակի կ'երեւային գոցուած
վէրքի նշաններ , սպիւնի՝ երեք Փրանքնոցի մեծութիւնով :

Քաղաքապետարանը կէս փարսախ հեռու կը գտնուէր ագարակէն .
ուստի հոն գացլինք հետիտան և յետոյ , երբ արարողութիւնը աւարտե-
ցաւ , վերադարձանք նոյն կերպով : Հանդիսական ամբոխը , որ եկե-
ղեցիին մէջ միակ ուսընդամութ ժողաւէնի մը պէս կ'երեւար միա-
գոյն , դաշտը՝ կանանչ հասկերու մէջէն օժապոտոյտ անցնող նեղ արա-
հետին երկայնքը վէտ վէտ ծածանելով երկարեցաւ և քիչ վերջը բաժ-
նուեցաւ ուրոյն կոտորներու՝ որոնք իրարմէ ուշ կը մնային խօսուբառե-
լով : Առջեւէն կ'երթար նուագածուն , զարդարուն սատափներով երիզ-
ուած իր ջութակովը . յետոյ թագաւորը և թագուհին , խնամիները ,
բարեկամները խառն ի խառն . ամէնէն վերջը , պզտիկ տղաքները՝
որոնք կը զրօսնուին վարսակի ծղօտներ և բոժոժ բոյսեր փրցնելով և
իրարու հետ խաղալով ամբոխէն անտես : Հարսին շրջագդեստը քիչ մը
երկայն ըլլալով՝ գետինը կը քսուէր . երբեմն երբեմն ան կը կենար ,
վեր առնելու համար զայն քովընտի , և միեւնոյն ատեն ձեռնոցաւոր
մատներովը մէկդի կ'ընէր փակչած խոտերը և փոքրիկ փուշերը , մինչ-
դեռ քանի մը քայլ առաջ , փեսան իրեն կը սպասէր ձեռնունայն :
Հարսնետոնները կը խօսակցէին իրենց գործերուն վրայ կամ իրարու հետ
կ'իշխային զուարճանալով . ու միշտ կը լսուէր երգը ջութակահարին , որ
անդադար կը խաղար դաշտին մէջ : Ան երբ կը տեսնէր թէ բազմու-
թիւնը բաւական ետեւ մնացած է , քիչ մը կանգ կ'առնէր հանգչելու
համար , ռետանիւթով մը երկար բարակ կը մոմէր իր ձգտող , որպէս զի
լարերը աւելի աղէկ ճղւան . յետոյ նորէն կը քալէր , վեր կ'առնէր ու
կը խոնարհեցնէր ջութակին դաստակեաղը , ճշգրտու համար երգին
եղանակը և չափը : Կրկնօցին ձայնէն ճնճղուկները հեռու կը փախչէին
ահաբեկ :

Սեղանը պատրաստուած էր սայլատունին տակը . վրան կային չորս
պնակ եղի թիկնամիս , վեց պնակ՝ վառեակ և հորթի խաշածոյ միս ,
երեք պնակ դառնուկի ճուռ , իսկ մէջտեղը՝ կաթով տապկուած և

թրթնջուկներու մէջ զետեղուած պատուական խողերն : Անկիւնածայրերը դրուած էին օղիի սրուակներ : Շիշերու մէջ խնձորօղին իր թանձր փրփուրը վեր կը մղէր խցիկներու բոլորտիքէն . գինիին բաժակները առաջուց լեցուած էին մինչեւ չրթունքները : Դեղին սերի խոշոր պնակներ , որոնք կը դողդղային սեղանին պղտիկ մէկ շարժումէն , իրենց հարթ հաւասար մակերեսին վրայ կը կարդացնէին նորապսակ ամուլին շաղապտուած և մանրիկ շաքարահատով շինուած անունի սկզբնատառերը : Կարկանդակի և հրուշակի համար յատուկ ծաղարար մը բերած էին մօտակայ քաղաքէն , և որովհետեւ այդ մարդը առաջին անգամը ըլլալով գործ կ'ընէր այդ կողմերը՝ ինքզինքը աղէկ ճանչցնելու համար , մասնաւոր խնամքով կը պատրաստէր ուտելիքները : Աղանդերի պահուն ինքը անձամբ բերաւ «կարկառուն խմորեղէն» մը , որ ողջունուեցաւ ձայներով : Ստորին մասը մեհենածեւ քառակուսի մըն էր , կապոյտ խաւաքարէ , սրահի բաժանումներով , շուրջանակի փոքրիկ կճածեփի սիւններով ու արձանիկներով . ու խորչերուն մէջ կը պսպղային ռսկեզօծ թուղթով շինուած երկինքի լուսաւորներու նմանութիւններ . երկրորդ դասիկոնը կը ձեւանար Սալուական կարկանդակով աշտարակէ մը՝ զոր կը շրջապատէին մանր մունր ամբողթիւններ , շաքարէ , նուշէ , չամիչէ և նարինջի շերտերէ . վերջապէս տանիքին վրայ՝ որ դալար մարգ մըն էր և ուր կային ժայռեր , շաքար ջուրով լիճեր և կաղինի փայտէ նաւեր , կը տեսնուէր փոքրիկ սեր մը , որորուած ճօլօրիկէ մը՝ որուն երկու գերանները ընական վարդի երկու կողմններով կը վերջանային :

Մինչեւ իրիկուն կերուխում . նստելէ յոգնողը կ'երթար քիչ մը ժուռ դալու բակին մէջ կամ խորձ խորձ խաղալու՝ կամնոցին քով . յետոյ նորէն սեղան կը դառնար : Ոմանք վերջերը հոն քնացան ու խուկային . բայց սուրճի պահուն ամէնքն ալ կենդանացան . այն ատեն սկսան պարերը , դարձադարձ աշխուժ շրջանները . ձեռք ձեռքի , բոյթ բոյթի կ'անցընէին . կը կարծէին սալակները ուտելու վրայ վերցնել : — Իրիկունը , մեկնելու ժամանակ , ձիերը՝ որոնք մինչեւ պինչքերնին վարսակ կերած էին՝ դժուարաւ լուծի եկան . աջ ու ձախ կ'աքացէին . ետեւի ոտքերնուն վրայ կը կանգնէին , ասպաղէնները կը կոտրտէին . անոնց տէրերը կը պոռպոռային կամ կը խնդային և բոլոր գիշերը՝ լուսնի լուսին՝ ճամբաներու վրայ լուեցան աղմուկները սընթաց կառքերուն , որոնք առուններուն մէջ կ'ոստնուէին , մեթրաչափ անդին կը դատակէին ձորակի խիճերուն վրայ , վար կը սուբային զաւթիմափ ուղիներէ , մինչդեռ կիները դուրս կը ծռէին դռնակներէն՝ պինդ բռնելու համար անոնց երասանակները :

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Կարմիր մազերով մազերով
Վարդ երեսդ լուս կը ցեռէ նազերով
Ամէն առտու կ'ելլաս սէհրան ,
Նս կը լինիմ քեզի հէյրան :
Դուն կ'լօրիկ աղկէկ հէյրան
Օտվիտ թօզերով , թօզերով :

Աղկէկ ես , չունիս պիֆայ
Ինչո՞ւ կու տաս հոգուս հաֆայ ,
Էլօր էնիք զէվիս ու սէֆայ ,
Խուստ խաղերով խաղերով :

Աշըղ Արթին սէտիաներ տողան ,
Մալիկա տամ քեզ արմազան ,
Մազերդ իս էրեր տարտղան ,
Գովեմ սազերով նազերով :

Էրէկ ես աղկէկ մի տեսայ ,
Թուշը բաղցուած վարդ կ'ըլմանէր ,
Քինծ ու բերան պզտուտիկ
Բնքուն հիլալ կ'ըլմանէր :

Էլիւ էր կանկներ էր պատին ,
Վարդ ըռահան շարեր գօտին ,
Իրեն մատին դրեր մատին ,
Ակը զոհար քար կ'ըլմանէր :

Էլիւ էր կանկներ էր դուռը ,
Ծոցը ուներ քաղցր նուռը ,
Հոգիկը զարկեր էր հուրը
Պոյը սէվլի տալ կ'ըլմանէր :

Գովէ' , Լէվէնտ , գովէ' ,
Ընքվիդ կամար , աչուիդ ծով է ,
Աս աղեկան տէրը վս՞վ է ,
Մորայ սուլմանայ կ'ըլմանէր :

ՍԻՒԼԼԻ ԲՐԻՏՈՍԻ ԵՐԱԶԸ

Սիւլի Բրիտոսի մանուան առիքով Հայ քերթերու , մասնաւորապէս Մասիսի մէջ հրատարակուեցան այդ իմաստաւէր քերթոյն կեանք , գրական գործունէութիւնը եւ իր մեակած բնաստեղծութեան նկարագիրը ցայտեցնող գեղեցիկ ուսումնասիրութիւններ : Այդ առիքով մասնաւորապէս յիշուեցաւ իր մէկ աշխարհաճոյնի դարձած քերթուածը , *Բեկեալ Անօրը* [Le vase bisé] որ Սիւլի Բրիտոսի շահեցուցած է ժողովրդական համբաւ մը : Կը կարծենք թէ այդ քերթումէն քիչ սլակաւ հռչակուած է նաեւ նոյն հանճարեղ բանաստեղծին մէկ ուրիշ ձայնեակը *Երազ մըն* [Un Sonje] որ թէեւ *Բեկեալ Անօրը* ին բանաստեղծականութիւնը եւ զաղափարի ներութիւնը չունի , բայց իր պարզութեան մէջ կը պարունակէ քնկերային բարոյականի վնիս իմաստասիրութիւն մը , ոգեւորուած գերազանցապէս աշխարհական շունչով մը : Այս ձայնեակն ալ շատ մը գրական հաւաքածոներու մէջ գտնուած է եւ որքան որ գիտենք հանգուցեալ Ռեթեւս Պերպերեան այդ քերթումին գրեթէ բառական քարգմանութիւնը կատարած է ժամանակին անյանգ ռաւանաւորով եւ իրեն յատուկ գրաբարակերպ լեզուով . իսկ անկէ զատ գէթ ինծի ժանօր չէ թէ ուրիշներ ալ քարգմանած են զայն , ինչպէս Բանի մը քարգմանութիւններ ունեցած է մեր մէջ Սիւլի Բրիտոսի այն միւս ձայնեակը [*Բեկեալ Անօրը*] : Մենք այս անգամ փորձեցինք *Երազ մըն* քարգմանել ո՛չ բոլորովին բառական հետեւութիւնով , առանց սակայն այլալիշու իմաստ , եւ ստրեւ Լը հրատարակենք մեր քարգմանութիւնը , սպասելով որ աւելի լաւագոյն քարգմանութեան մը արժանանայ ան եւ փափակելով որ մեր բանաստեղծները քիչ մըն ալ այս կարգի իմաստասիրական քերթումներու սեւը մեակեն , որ սպանովաբար շատ մը արդէն մեակուած սեւերէն աւելի կ'արժէ :

ՀԱՊՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԵՐԱԶ ՄԸ

Երազիս մեջ մշակեմ ըստ ինձ . «Ո՛վ մարդ,
«Մշակե՛ հողն , ալ հացդ անձամբ բուսցո՛ւր դուն» .
Ոստայնակն ալ . «Հագուեսկերդ դո՛ւն գործե՛ արդ» .
Իսկ որմնադիրն . «Ո՛ն , ծեփիչն ա՛ն , շինե՛ տուն» :

Ու միս միմակ՝ շիւած բոյր մարդոցմէն
Որոնց մերժման կը բաղխէի ամէն տեղ ,
Մինչ գրոյթիւն կը հայցէի Երկինքէն ,
Կը զսեփի դեմս առիծներ ցից , անկող :

Բացի աջերս , աչքն եր ծագեր , իրա՞ն եր .
Բզգիւնը ժիր բանւորներու կը ըսուէր .
Հողն ալ ցանուած եր մշակեմ խեղացի :

Ճանչցայ յայնժամ երջակութիւնս , գիտցայ թէ
Մարդս միշտ իր նմաններուն կատարէ .
Անկէ ի վեր մարդիկն ամէն սիրեցի :

ՍԻՒԼԼԻ ԲՐԻՏՈՍ

ԱԼԵԿՈՇՈՒՅԻՆ

Կոհակները կը բրզանան , կը կոնգնին ,
Յեռոյ ամբողջ կը փերտին ուժգնաբար .
Ծովին վրայ արհաւիրքը ունայնին ,
Նա հովերը որոնք կ'ոռնան անդադար :

Օմպերն իրար կը հալածեն , կը գողան ,
Թաափները դէպի ցամափ կը ճապեն ,
Մըրթիկն է որ կը շաշէ մոլեկան ,
Խաբխախներուն ըսպառնալով հեռուէն :

Փետուրի պէս շոգեմաւր կը դողայ ,
Շուրջը հեղուկ պարապկոյումը ջուրին ,
Սնդուկներու երախներէն անխրնայ ,
Նրկինքէն վեր շատուանող ծովն ուժգին :

Բայճառումն է որ կը սկսի կայմերուն .
Նաւագները , համբոյրներն ալ միասին ,
Նաւակներուն խորն ընկզմած , վախերնուն
Կոգեկոչեն բարութիւնը Յիսուսին :

Յարձանները կու գան , կ'առնեն , կը ճանի
Յոյսի , մահուան շաղապատումն է վայրագ .
Փոքորիկը կը ստատկանայ , դիւային
Շառաչներով որոտալով շարունակ :

Ոսկի հսկայ նեփ մը պէս երկինքէն
Կայծաղէն է որ կը սողոսկի ջուրին մէջ .
Սմայաւազած դորդումներ միշտ կ'երգեն
Գեղեցնային դժոխերգը մահաւելջ :

Վերջապոյսին լեռը կարմիրն է ծիրանի ,
Որ բրինձնուտ հեղուկի մը պէս եկեր
Ծովին ըմբոս ալերուն հետ կը լուծուի ,
Նրկներփելով մակերեսը մօտերէր :

Նաւի բեկոր չէ մնացեր , ամէն բան
Մխրեռած է աւազուսէին մէջ գետինին ,
Ո՛չ ալ մարդու հիշեր , խղարկ , անկենդան
Սրճագանգը կը ծարածէ իր չորային :

Սնդնդախոր ծովին վրայ կապարէ ,
Վերջապոյսը երբոր հեռո՛ւն կը մարի ,
Մըրթ լուռը քեւատարած կը տիւրէ ,
Նրկինքին ճակ գոգաւորում-կամարի :

Մութը կ'իջնէ գարշ ամպերէն վար , ՇԱՆ ՇԱՆ
Սուգի ֆոդի պէս ծածկելով գոհերուն
Սնեցաւազած մարմինները անօգուտ ,
Փոքորիկին ճաւաճէն վերջ դեղեւուն :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՍԻՐՈՅ ԲՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ

Ե.

Բնականորաբ չենք կրնար նոյնչափ ճշգրտօրէն թուել այն անգիտակից նկատումները, որոնց կը փարի կիներու հակումը : Ահա ինչ որ կարելի է հաստատել ընդհանուր կերպով : Կիները կը նախընտրեն 30-35 տարու երիտասարդները, քան թէ տարբեր տարիք ունեցող այրերը . նոյն իսկ այն երիտասարդները, որոնք առնական գեղեցկութեան ծաղիկը կը ներկայացնեն, կիներու նախապատուութեան չեն արժանանար : Ասոր պատճառը սա է . ր. զանոնք վարողը ո՛չ թէ ճաշակն է, այլ բնավը, որ այդ տարիքին մէջ կը տեսնէ ծննդաբերական ուժը : Կիները ընդհանրապէս չափ քիչ անգամ նկատի կ'առնեն գեղեցկութիւնը, մանաւանդ դէմքի գեղեցկութիւնը, իբր. թէ իրենք միայն պաշտօն ունենային սղուն փոխանցելու դայն : Ամէնէն աւելի էրիկ մարդուն ուժը և արիութիւնը կը գրաւեն անոնց սիրտը, որովհետեւ այդ յատկութիւնները կը խոստանան կայտառ աղոց սերունդ մը, և ապագային մէջ ալ քաջարի պաշտպան մը ապահոված կ'ըլլան : Էրիկ մարդուն մարմնական որ և է թերութիւնը, մարդկային ախպարէ չեղումը, կրնան անհետանալ ձեռքի սղուն մէջ, կնոջ միջոցով, եթէ այս վերջինը անսպառնալի և նոյն իսկ հակադարձօրէն չափազանցուած կերպով ունենայ մարմնական այն համապատասխան մասերը, որոնք պակասաւոր են էրիկ մարդուն քով : Պէտք է բացատրութիւն նկատել էրիկ մարդուն այն յատկութիւնները, որոնք իր սեռին յատուկ են և հետեւաբար մարդը չի կրնար փոխանցել իր զաւակին . օրինակի համար՝ մարդկային կմախքին յօրինուածքը, լայն ուսեր, նեղ ազդեր, ուղիղ սրունքներ, մկանունքներու ուժը, արիութիւն, մօրուք, և այլն : Այդ պատճառով է որ կիները յաճախ աղեղ էրիկ մարդեր կը սիրեն, բայց ընտելնամարդի այրեր, որովհետեւ չեն կրնար չեղոքացնել նմանօրինակ թերութիւն մը :

Սիրոյ մէջ կարեւոր եղող նկատողութիւններուն երկրորդ կարգը կը վերաբերի հոգեկան յատկութիւններուն : Էրիկ մարդուն սիրտի ու նկարագրի յատկութիւններն են որ՝ կը յանկուցանեն կինը, որովհետեւ ազան իր հօրմէն կը ստանայ զանոնք : Ամէն բանէ առաջ՝ անյողդողդ կամքը, կարուկ որոշողութիւնը և արիութիւնը, թերեւս ուղղամտութիւնը և սիրտի բարութիւնն ալ կը գրաւեն կնոջ սիրտը : Ընդհակառակը՝ մտաւորական ձիւքերը որ և է ուղղակի ու բնագլխական ներգործութիւն մը չեն ընել կնոջ վրայ, ճիշդ սա բանին համար որ՝ հայրը իր զաւակներուն չփոխանցեր զանոնք : Էրիկ մարդոց անմտութիւնը, անհաճոյ չթուրի կիներու, գերազանց միաքի մը ուժը և նոյն իսկ հանճարը՝ իր անհամեմատութիւնով յաճախ աննպաստ տղաւորութիւն

մը տաաջ կը բերեն : Այսպէս՝ յաճախ կը տեսնուի որ տգեղ, անմիտ ու գոհնիկ մարդ մը կիներու սիրտը կը գրաւէ , բարեկազմ , սրամիտ ու հաճոյակատար էրիկ մարդու մը տեղը անցնելով : Նոյնպէս հակումով ամուսնութիւններ կը տեսնուին , միտքի տեսակէտով իրարու թուովին այլաման էակներու միջեւ . օրինակի համար՝ այրը բիրտ , կայտառ և սահմանափակ , իսկ կինը հեղ, դիւրազգած , նրբամիտ , ուսեալ , ճաշակի տէր և այլն . և կամ թէ այրը՝ խիստ հմուտ , հանճարեղ , իսկ կինը՝ բոլորովին անմար .

Sic visum Veneri; cui placet impares
Formas atque animos sub juga aenea
Saevo mittere cum juco.

Ասոր պատճառը սա է որ՝ տիրապետող նկատումները մտաւորական բան մը չունին իրենց մէջ ու բնազդին հետ կապուած են : Ամուսնութեան մէջ մտացի խօսակցութիւն մը կարեւորութիւն չունի , այլ զաւակնեցող ծննդագործութիւնը . ամուսնութիւնը սիրտերու՝ միջեւ հաստատուած կապ մըն է , և ո՛չ թէ գլուխներու : Երբ կին մը կը հաստատէ թէ էրիկ մարդու մը միտքին սիրահարուած է , անտախ ու ծաղրելի յաւակնութիւն մըն է ատիկա , կամ թէ այլասերած էակի մը յափշտակութիւնը : Բնդհակառակը՝ այրերը , բնազդական սէրին մէջ , կնոջ նկարագրին յատկութիւնները նկատի չեն առներ . այս պատճառով է որ շատ մը Սովրամներ իրենց Քսանթիքները ունեցած են . օրինակի համար Շէյքսպիր , Ալպէրթ Տիւրէր , Պայրըն , և այլն : Բայց մտաւորական յատկութիւնները մեծ ազդեցութիւն մը ունին հոն , որովհետեւ մօրը կողմէ փոխանցուած են . ասով մէկտեղ՝ մարմնական գեղեցկութեան ազդեցութիւնը աւելի դիւրազանց կը հանդիսանայ , որ աւելի ուղղակի կերպով կը ներգործէ աւելի էական կէտերու վրայ : Սակայն կը պատահի որ մայրեր , մտաւորական ազդեցութեան ի՛նչ ըլլալը փորձառութիւնով ըմբռնած ըլլալով , իրենց ազջկան սորվեցնեն դեղարուեստ , լեզուներ և այլն , աւելի յանկուցիչ դարձնելու համար զանոնք ազազայ ամուսիններու . այդ տեսակ մայրեր կը ջանան իմացականութեան օգնել արուեստական միջոցներով , ինչպէս պէտք եղած ատեն կը ճգնին զիստերը և լանջքը զարգացնել : Պէտք է դիտել որ՝ հոս խնդիրը կը դառնայ բնազդական ու անմիջական հրապոյրին վրայ , որ միայն կրնայ ծնունդ առ սիրոյ ճշմարիտ տարփանքին : Բանիմաց և ուսեալ կին մը կրնայ գնահատել էրիկ մարդու մը իմացականութիւնը եւ սրամտութիւնը . խոհասէր ու ողջամիտ այր մը կրնայ փորձել իր նշանածին նկարագրիւր . բայց այդ ամէնը աւնչութիւն չունի հոս յուզուած խնդիրին հետ . բանականութիւնը այդպէս կը շարժի , երբ իր կողմէ կը կա-

տ որուի ընտրութիւնը , և ո՛չ թէ կրքոտ սէրին կողմէ , որով միայն կը զբաղինք հոս :

Մինչև հիմա բացարձակ նկատողութիւնները առաջ բերի , այսինքն անոնք որ ընդհանուր արդիւնք մը կ'ընծայեն . հիմա կ'անցնիմ յարաբերական նկատողութիւններուն , որոնք անհատական են , որովհետեւ հոն նպատակը կը ձգտի մարդկային ցեղին արդէն իսկ այլասերած տիպարը բարեփել , ընտրող անձին մէջ գտնուած տիպարին մոլորանքները ուղղել , և այսպէս անխառն տիպարի մը արտադրութիւնը ձեռք բերել : Ամէն ոք ճիշդ այն բանին կը բաղձայ՝ որ իր քով կը պակսի : Անհատական ընտրութիւնը , որ այդ յարաբերական նկատողութիւններուն վրայ կը հանգչի , շատ աւելի որոշ , կարուկ ու այլամերժ է , քան թէ այն ընտրութիւնը , որ բացարձակ նկատողութիւններէ կախում ունի . առհասարակ այդ յարաբերական նկատողութիւններէն ծնունդ կ'առնէ կրքոտ սէրը , մինչ սովորական ու վազանցիկ սէրերը բացարձակ նկատողութիւններէ միայն կ'առաջնորդուին : Կանոնաւոր և անթիւրի գեղեցիկութիւնը չէ որ կ'արծարծէ մեծ տարփանքները : Ճշմարտացէս կրքոտ հակում մը առաջ դառու համար այն տեսակ պայմանի մը պէտք կ'այ՝ զոր՝ ճշդացէս՝ տարրաբանութենէն առնուած փոխաբերութիւնով մը միայն կրնանք բացատրել : Երկու անձերը պէտք են զիրար չեզոքացնել , ինչպէս ռախճ մը և ալիքի մը կը կազմեն քիմիական չեզոք աղ մը : Ամէն սեռային կազմութիւն անկատար է , եւ անհատէ անհատ կը տարբերի անկատարութիւնը : Երկու սեռերու մէջ ալ իւրաքանչիւր էակ ամբողջին մէկ թերի ու անկատար մասն է : Բայց այդ անկատար մասը կրնայ քիչ կամ շատ մեծ ըլլալ , բնաւորութիւններու համեմատ : Այսպէս իւրաքանչիւր անհատ իր բնական լրացուցիչը կը գտնէ միւս սեռին վերաբերող որ և է անհատի մը մէջ , որ կերպով մը կը ներկայացնէ կատարեալ տիպարին անհրաժեշտ եզրղ կոտորակը . ան է որ կը լրացնէ ու կը չեզոքացնէ իր թերութիւնները և մարդկային կատարեալ տիպար մը առաջ կը բերէ ծնելիք զաւակին մէջ . որովհետեւ ամէն ինչ այդ ուղագայ էակին կազմութեան է որ կը յանգչի միշտ : Բնախօսները կ'ըսեն թէ՝ սեռականութիւնը անհամար աստիճաններ ունի էրիկ մարդուն ու կնոջ մօտ . առնականութիւնը կրնայ մինչեւ իսկ որձեւէգի և ստորածակութեան վիճակները ունենալ . նոյն իսկ շնորձալից կիներուն մէջ կը գտնուին որձեւէգներ . երկու սեռերը կրնան կատարեալ արուէգութիւն ունենալ , և այդ տեսակ անհատներ , որոնք երկու սեռերու մէջ տեղը կը գտնուին , և , ո՛չ մէկ սեռի կը պատկանին , անկարող կ'ըլլան սերնդագործելու : Երկու անհատականութիւններու իրարմով չեզոքացումին համար անհրաժեշտ է որ էրիկ մարդու մը սեռականութեան որոշ աստիճանը ճշգրիտ համապատասխանէ կնոջ մը սեռականութեան աստիճանին , որպէս զի այդ երկու մասնակի

արամադրութիւնները իրար փոխարինեն ճշգորէն : Այսպէս՝ ամէնէն առ-
նական էրիկ մարդը կը փնտռէ ամէնէն կնոջական կինը . և փոխադար-
ձաբար : Սիրահարները ընաղդով կը չափեն իրենցմէ իւրաքանչիւրին
պէտք եղող համեմատական մասը , և այդ անգիտակից հաշիւը միւս
նկատողութիւններուն հետ մէկտեղ կը գտնուի ամէն մեծ տարիանքի
մէջ : Ուստի երբ սիրահարներ յուզիչ չեղտով մը կը խօսին իրենց հոգի-
ներուն ներդաշնակութեան վրայ , պէտք է հասկնալ որ յաճախ իւրա-
քանչիւր սեռի յատուկ ֆիզիքական ձիրքերու ներդաշնակութեան վրայ
կը դառնայ խնդիրը , կատարեալ էակի մը ծնունդ տալու համար , ներ-
դաշնակութիւն մը՝ որ հոգեկան համաձայնութենէն շատ աւելի կարեւոր
է , քանի որ այս վերջինը յաճախ բուռն անհամաձայնութեան մը կը
փոխուի ամուսնական արարողութենէն ետք : Ասոր կը միանան յարա-
բերական աւելի հեռաւոր նկատումներ , որոնք ու իրողութեան վրայ
կը հանգչին թէ՛ իւրաքանչիւրը կը ջանայ ուրիշին միջոցով չեղողքայնել
իր տկարութիւնները , անկատարութիւնները և կանոնաւոր տիպարէն
ուռնկած չեղումները , վախճալով որ քնոնք չչարունակուին աղագայ
սղոսն մէջ , աւելի չափազանցուած ու անհաւթիւններու փոխուած :
Մ'արդ ո՛րչափ տկար ըլլայ մկանային ուժի տեսակէտով , այնչափ աւելի
կը փնտռէ զօրաւոր կիներ . նոյն ընթացքին կը հետեւի նաեւ կինը : Եւ
որովհետեւ բնութեան մէկ օրէնքին համաձայն՝ կինը նուազ մկանային
ուժ ունի , ուրեմն բնական է որ կիները նախընտրեն կորովի մարդիկը :
Հասակի բարձրութիւնն ալ կարեւոր նկատողութիւն մըն է : Փոքրահա-
սակ մարդիկը յայտնի հակում մը ունին բարձրահասակ կիներուն և փո-
խադարձաբար . . . Բնութեան հայեցակէտով՝ բարձրահասակ կին մը կը
խորշի բարձրահասակ էրիկ մարդէ մը , որպէս զի հակայ սերունդ մը
առաջ չգայ , որովհետեւ մօրը կողմէ փոխանցուած ուժը շատ տկար պի-
տի ըլլայ և անկարող՝ երկար կեանք մը ապահովելու այդ բացառիկ
ցեղին : Երբ բարձրահասակ կին մը կ'ընտրէ մեծահասակ ամուսին մը ,
ի մէջ այլոց , վայելուէ երեւալու համար ընկերութեան մէջ , յաջորդ
սերունդներն են որ պիտի քաւեն այդ յիմարութիւնը . . . Նոյն իսկ
մարմինին զանազան մասերուն մէջ ամէն ոք իր թերութիւնները և խո-
տորումները ուղղող բան մը կը փնտռէ ա՛յնչափ հոգածութիւնով , որ-
չափ կարեւոր ըլլայ այդ մասը : Այսպէս՝ տափուէջ մարդիկ ա՛րքացա-
րելի հաճոյքով մը կը դիտեն արծուեռունդ մը , թութակի մը նմանող
կողմնակի դէմքը . և այսպէս շարունակաբար Տխեղճ ու ծիւրած մար-
դիկ , երկայն կմախքով , կը հիանան հաստիկ և շատ կարճահասակ ու
փոքրակազմ մարդու մը վրայ :

ՊԻՏԻ ՍՊԱՍԵՄ . . .

Մարերի վերով զնաց , եա՛ր, եա՛ր :

Երե՛ք տարի : Դեռ կ'սպասե՛մ ես իրեն :
Ահա տարած հորիզոններն հեռաւոր ,
Ահա համբան որ կ'երկարի տրտման ,
Լռիկ համբան որ զայն տարա՛ւ մեհաւոր :

Ու տես հո՛ն գիւղին վերջին տունը ցած՝
Ռուն ետին՝ եղեւինի ծառին բով
Երկա՛ր երկա՛ր ես մնացի փառացած
Ու իր մեկնի՛լը դիտեցի արցունքով :

Երե՛ք տարի : Այս եւզ համբուն եզրն իմար
Երե՛ք անգամ ծընան մարգերը դաւաճին ,
Երե՛ք անգամ ձիւնի վաթիլն հողմնավար
Անձայն ելուեց անունը պատանքը ցրտին :

Յուսա՛լ , յուսա՛լ վերադարձի օրերուն .
Բայց ո՞վ իրեն պիտի երթաւ պատմելու
Թէ երկրի մաւր մէկ անկիւնին մէջ հեռուն ,
Ես կ'սպասեմ իրեն՝ սիրոյս իմ հըլու :

Երե՛ք տարի : Մաւր ձայն մը կայ անդադրում ,
Իմ վիրաւոր հոգւոյս մէջ չա՛ր ձայն մը կայ ,
Լացո՛ղ ձայն մը որ գիտերիս մէջ տեսում
Ե՛րբէ ինձ. «Ես՛դն աղջիկ , ան չի պիտի գայ . . . » :

Ա՛խ , կը հանչեամ բու բողոքի ձայնըդ , Վի՛ճս.
Սակայն ի զո՛ւր , ա՛յս է իմ գիրքս՝ նքոսմ .
Գնա՛ պատմել Տարիներուն քէ ես միւս
Պիտի սպասեմ, պիտի սպասեմ, սպասե՛մ. . . :

Ռ. ՍՆԻՍԿ

Ձ Ի Ի Ն Ի Ն Հ Է Ք Ե Ա Յ Ը

Շատ հեռուներէն եկեալ՝ երկհարիւրեակ տնւորի բնակչութիւն մը կու գար կը հաստատուէր ձորամէջի մը կուշան իլերէճաղձաղուած Գանանն էր այդ վայրը, իր Եդեմը փնտուող դժուարահաճ այս գաղթականութեան համար։ Մշտադալար գարուն մը կը տիրէր հոն։ Ակերը անձանօթ՝ աներեւոյթ լեռներէ բլխող զուլալ ջուրեր, իրենց սառնորակ ալիքները կը գլորէին այդ խորհրդաւոր ձորամէջէն, դալարիք ու բարիք սփռելով շրջակայքը և դարձեալ կը կորսուէին գիւղէն ժամերով հեռու խոր ու մութ քարանձաւներու մէջ, երթալ ուղիւն համար ուրիշ անձանօթ Աւետեաց մըն ալ։ Այս երջանիկ գաղթականները, «ճակցի ֆրսիմի» աստուածային դատակնիքէն սրբուած, առանց վար ու ցանի լիւտի կը վայելէին բնութեան բիւրարիւր բարիքները, և կ'ապրէին հանգիստ, զուարթ, Հեռ ու նախանձ, վէճ ու կռիւ մուտ չէին գործած դեռ այդ նորոգ շէնցած գիւղին մէջ։

Գայլը ոտք չէր դրած այն կողմերը, որ գառնուկը չարածուէր անհովիւ, այս քաղաքիկան ձորերուն մէջ, Հո'ս, ջուրը իր ընթացքին մէջ չէր պղտորած երբեք։ Գոտր ու պաճար արեւի մայրամուտին, կ'ուզուէին գէպի գիւղ, իրենք իրենց գլխուն՝ դալար անասուններուն օրինակելի հեղութիւնովը, տէրերնուն տալու իրենց լեցուն ստինքներուն աւատ կաթը։ Ա'ն, միակ գիւղն էր՝ կաթ և կաթնորակ ակեր բլխող՝ որուն հեշտարոյր օդը, ծառերը և ծաղիկները բերաղան, բերքն ու առատութիւնը պատմող ո'չ մէկ պատմարան, գեղեցիկ տեսարանները նկարագրող ո'չ մէկ գրիչ, կամ նկարիչ, և անոր քաղցրութիւնները երգող ո'չ մէկ բանաստեղծ եղած էր։ Անձայրածիր երկրին անհուն տարածութեանը մէջ, գիտուններուն և երկրախոյզներուն սուր տեսողութենէն լրիւյած այս մշտադարուն վայրը՝ դրախտը եղած ըլլար, հազիւ բնակուած Ադամէն և Նւայէն։ Ամալը՝ իր անձրեւովը՝ չէր երեւցած այդ գիւղի սահմանաւոր հորիզոնին վրայ, հովը իր փոթորիկներով չէր յուզած անոր խաղաղիկ մթնոլորտը, և երանութեան կախազանեայ պարտէզ մըն էր ան, փռուած ձորամէջի երկայնքին։ Շատ հեռուներէն եկեալ, երկհարիւրեակ տնւորի այս բնակչութեան վրձակած էր հաստատուել այս ձորին մէջ, և ըմբոշանել կեանքը՝ իր ամէն հաճոյքներով . . .

*

Ճամբորդներ, կարաւաններ ամբողջ, առջեւին գծուած բուն արահետէն շեղելով, կու գային իջեւանելու հոն, գոնէ գիշեր մը վայելելու համար այդ աննաման գիւղին բարեպաշտ ժողովուրդին համբաւուած հիւրասիրութիւնը։ Թռչունի թեւերով թռչող թռիւքները սուր հանդակներ քանի մը վայրկեան գէթ պիտի հանգչէին գիւղը եղերող

Թաւուա կաղնիներուն շուքին տակ . պիտի խմէին սառնորակ լուսաղ-
բիւրներուն ջուրէն , պիտի կշտանային գիւղի ծերո մամիկներուն բերած
համեղ , թանձրկէկ լաւաչէն . միւս կողմէ՝ ձիանաթիքը ձորտմէջի թարմ
խոտերէն փունջեր պիտի փրցնէին : Այսպէս լիովին վայելած մոռացումի
սուղ վայրկեաններ՝ կը շարունակէին իրենց երկարածիք ճամբան , զօրա-
ցած , կազդուրուած :

Հոս հանդիպող ճամբորդներ , ուր որ ալ իջեւանէին , գիւղ ,
սւան կամ քաղաք , զարմանքով կը պատմէին այդ փոքրիկ գաղութին
հիւրամեծարութիւնը և կը դովէին մանաւանդ , կարազէն , պանիրէն
տելի , անոնց քօջօջիկ թանձր լաւաչը :

— Յորեւի ալիւրէ պատրաստուած է ըսե՛ս , չէ՛ . ո՛չ գարիի և ոչ
ալ մեր գիտցած ո՛ր և է հատիկի ալիւրի համ չտար . համե՛ղ , համե՛ղ .
կերած ստենդ ինչի համ ուզես կու տայ . համը բերանիս է , սակայն իր
խկութիւնը չենք գիտեր :

Այս բառերով կը դովէին ճամբորդները հիւրասէր գիւղացիին լա-
ւաչը : Ամէն ամիս , զարմանալի հրաշքով մը , շատ երկիրներու մէջ ան-
ճանօթ ծառի մը լայնկէկ տերեւներուն վրայ , գիշերանց կ'իջնէր տե-
սակ մը մանանայ և գիւղացիները առտուն կանուխ մեծ երկիւղածու-
թիւնով կը ժողվէին անկէ բաւականաչափ , լիցնելով տաշտ և կոնք :
Զգայուն էին և երախտապարտ այդ երկնային պարգեւը շնորհող Գե-
րադոյն Արարիչին : Առտու իրիկուն , միահամուռ կ'երթային կամուր-
ջէն անդին գտնուած խոր քարանձաւի մը լուսաւոր նախադաւիթը և
հոն կ'աղօթէին իրենց հետ բերած խաչելութեան պատկերին առջեւ :
Կիրակի ու սօն օրեր , քահանայական հնօրեայ շառաւիղի մը նահա-
պետը , յորդուց սրղի օրհնուած , կը պատարադէր և կը հաղորդէր ժո-
ղովուրդը հինգ տաղաւարներուն :

*

Սերունդներ փոխուած էին և գիւղը ընդարձակուած իր լաղմա-
ծնունդ թռչնորդիներով . երկինքի այս դարուոր պարգեւին նկատ-
մամբ , նորերը չէին տածեր հիններուն սրբանուէր պաշտամունքը : Յափ-
բացած , ճոխացած և յվիացած բոլորովին բարիքներով , գիւղացիներ
մանանայ-ալիւրը բնութեան մէջ հասարակ երեւոյթ կը համարէին , քան
երկինքին լիառատ պարգեւը :

Օր մը , կիրակի առտու , գիւղին պօրան իվեր կ'առաջանար կա-
րաւան մը յոգնած ուղեւորներու , որոնք՝ հեախ՝ կրկնուած էին ճամբու-
ղի իրենց գաւազաններուն :

Այրերը և մամիկները «անձաւ-մատուռ»ը դացած էին , կիրակնօր-
եայ Ս. Պատարազը տեսնելու : Ապաշխարանքի և պահքի օրեր էին :
Նորատի հարսեր և դեռահաս օրիորդներ տունը կը մնային , փոքրիկնե-
րը հակիւռ համար : Կանուխէն վառուած բոխերիկներէն դեռ օդին մէջ
կը տարածուէր թարմ լաւաչներու բոյրը , գրգռելով նորիկ անօթի ճամ-
բորդներուն սնգունքը :

Դիւզին է՛ն հարուստին դուռը լաղխեցին ճամբորդները , կատարեալ վստահութիւնով : Դուռը անմիջապէս բացուեցաւ՝ կռնակին վրայ : Տան հարսը , վառուած և դեռ նոր իջած թոնիրի շողէն նուախեցնելով , կը դիմաւորէ հիւրերը և ներս կը հրամայնէ զանոնք :

— Ծնորհակալ ենք , խաթո՛ւն , կը պատասխանեն բարի հիւրերը , ճամբորդ ենք , նստելու ժամանակ չունինք :

Դեռատի հարսը ներս կը փութայ հիւրերուն համար կերակուրի ծրարը պատրաստելու , մինչ հիւրերը դրա՛ն դրանը առջեւ կը սպասեն : Դիմացը , թոնիրին անկիւնը կոյր մամիկը նստած է , թունորդի մանկիկը գրկին և միւս ձեռքով իր տարիքին թիւովը երկար համրիչ մը կը քաշէ՝ «Տէր ողորմա» մրմնջելով : Տան հարսը բաւական ուշայաւա՛ր Դուռի դրան քովիկը , ճամբորդներէն մէկը դիտել տուաւ ընկերներուն , լաւաշի կտորուանքներ՝ մանկիկի կղկղանքով պղկուած . . . : Պժգասցին , գայթակղեցան և առանց հարսին բերելիք կերակուրի ծրարին սպասելու՝ մեկնեցան անօթի :

Հարսնուկը վերադարձին չգտաւ հիւրերը դրան քով . ծերուկն ալ բան մը իմացած չէր : Եկեղեցիէն վերադարձին , տեսան շատեր դուռն հետուած լաւաշները , որոնք իբր մանկան-չոր գործածուած էին ամբարիշտ հարսին կողմէ . . . : Փողոցին շունները անգամ չէին լափած այդ պղծուած լաւաշները՝ անոնք ալ գայթակղածի երեւոյթը ունէին :

Ծամբորդները գիւզին դիմաց , ժայռի մը գլուխը կանգ առած , անիծեցին այդ երեւմանի օրհնուած և հիմա ամբարշտացած անւորները գիւզին :

Անմիջապէս երկինք կը մթաղնի , կը փոթորկի : Ամբողջ ձորի երկայնքին կը փչէ հեռաւոր լեւներէ փրթած անտանձ պախրցին :

Հետեւեալ օրը , դեկտեմբերէն յունվար լուսցող գիշերին , գիշերանց՝ մանաւանդ՝ աշխրիւ տեղ ձիւն կը տեղայ ամբողջ գիւզին վրայ և չրջակայքը . ցուրտի և պատիմի սարսուռը զգացուեցաւ բոլոր երակներու մէջ : Ծամբաները բոլորովին դոցուած , շտեմարանները թափուր , բքաչունչ ձիւնը կը սառեցնէ , կը մարակէ ամբարշտացած բնակչութիւնը . . . :

Լաւաշը իբր մանկան չոր . . . :

Հեռակայ բարձրաբերձ լեռներուն վրայ տեղացած , կուտակուած ձիւնը՝ մարտի գաղջ հարաւէն լուծուած , հեղեղներ , անհրաժեշտ հեղեղներ կաղմեց , դուռ ու գոյնմով իջաւ վար , դէպի գաշտ , մտաւ ձորամէջը , իր խեռ ու խելառ վաղքովը քնեց տարաւ պաճար ու դուար , տուն ու երգիք . պատժեց՝ ամբողջ գիւզը և այն օրէն իվեր ձիւնը եւ փոթորիկը պակաս չեղան այդ տեղացիներու գլխուն :

Հեղեղի աւերներէն , քաղցէն ընկճուած գիւղացիին վերջամասց գաղութը՝ լքեց այդ աղէտներու ձորամէջը , և գնաց այլուր փնտռելու հանգիստ և ապահով վայր մը : Ուր որ ալ գացին , ձիւնը և փոթորիկը իրենց գլխուն պակաս չեղան :

Ամբարտաւանութիւնը պատժուած էր . . . :

ԿԵԱՆՔԸ *

ԽՈՂՆԵՐՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ

Նամակնիդմեծ համոյքով կարդացած եմ քանի մը անգամ Անմահութեան հաւատքին, կեանքին ու կեանքի կոչումին գիտակցութիւնով ըստպարող մէկը իրաւ որ մշտնջենական խնջոյքի մը մէջ կ'անցընէ օրերը, կեանքը հարստանիք մըն է իրեն ու մահը դռնակը յաւիտենականութեան Անհաւատը ջախջախուած եղէզ մըն է . աննպատակ կեանքը՝ անիմաստ վէպ մը : Հաւատքը ներքին մղիչ ուժ մըն է . իտեպիլը արտաքին ներշնչող զօրութիւն մը . հաւատքը կ'իտեպիլ կ'արժեն գործ,—մշտնջենական կեանքը կը փափաքի որ զրեմ . Ձեռք փափաքը իմ կամքը : Դրեմ ինչ որ կը սիրէք . գիտեմ կեանքը կը սիրէք . ուրեմն տեսութիւններս զրեմ կեանքին վրայ : Մագդեղուս մէջ ճերմակ չկայ ու ճիտօրէն տակ փառաւոր մօրուք մը չի բազմիր պերճօրէն . սակայն մտածելը կը սիրեմ . Խօսիւ [*] զինքին աւելի անուշ է ան ինքի ու պատանիի մը երազներէն մոզիչ : Կը սիրեմ մտածել ու մտածողները սերտել . կը սիրեմ իմաստասէրները ու ինչ որ իմաստ մը ունի : Ձեւը, գոյնը, ցոյցը, ձայնը, շեշտը, ոճը, արարողութիւնը, պայմանադրական կոտորուածները, զարդը, մօզան, ժանեակը, փողկապը եւ մակարը, ոսկին ու մանեակը, ասոնք ամէնը յղացող սկզբնական քանկը ու նուիրագործող ծանծաղ զուլաները Դիոգենէսի մը շնական արհամարհանքով կը դիտեմ, կը դատեմ ու կը դատապարտեմ . . . Կեանքը կը սիրեմ, անուշ է ան, մահը չեմ սիրեր . կեանքը սերտել

* Խարբերդի Եփրատ Դօլէճի ուսուցիչներէն Յովհաննէս Պուճիգանեանի—որ հոգեբանութեան ու արտաբանութեան մասնագիտութիւնը կատարելագործելու համար Վարժարանին անօրէնութեան կողմէ Էտիսպուրիի Համալսարանը զրկուած է—Խարբերդ իր բարեկամներէն Խաչատուր էֆ. Թէվրիգեանի գրած նամակ մը՝ զոր կը հրատարակենք իբր փրկատիպական հայեացք մը՝ կեանքի վրայ:

Խմբ. Ծան.

[**] Խօսիւ Խարբերդի հարաւային կողմը, հինգ ժամ հեռավորութիւնով գիւղ մը, որուն խաղողը եւ գինին նշանաւոր են :

ու անոր գաղտնիքները վերլուծել ամէնէն շատ կը սիրեմ : Լուսազարդ երկինքէն աւելի մանուկներու բոց աչքը կը սիրեմ, որոնք իմաստ մը ունին, անմեղ սիրտի մը խոտուն մարգարէներն են : Ծաղկազարդ, մարգազարդ զարունէն աւելի ժպտուն դէմքը ու բլրուն լեզուն կը սիրեմ՝ որոնք սիրտի մը ցոլուն փնթումներն են ու հոգիի մը Թրոնուն նուագները : Երգելը չեմ տես, ժպտիլը կը սիրեմ՝ երբ անկեղծ ու համակիր դէմքի մը վրայ կը ցոլայ . արցունքը կը գնահատեմ, երբ ապաշխարութեան բիւրեղն է ու գութին մարգարիտէ շիթը . ցաւը իմաստութեան մայրը ու վսեմ կեանքին հայրը կը դաւանիմ . համոյքը առաքինութեան մրցանակը, համեմը կեանքին ու գերեզմանը անոնց՝ որոնք համոյքէն բարձր դաւանանք մը չունին : Ընտանեկան կեանքէն անուշ ու անկեղծ սէրէ մը քաղցը բան չգտայ դեռ . հրեշտակները կը մեղքեմ . անոնք զուրկ են այդ անուշութենէն : Մայր, հայր, կիւն, կիւն, եղբայր, քուսակ, այս հիւնք բառերը էն նուիրական ու քանկագին գանձերն են կեանքին . առանց անոնց կեանքը ճգնարան մը կը դառնար ու մարդը խեղցիկ հրեշ մը : Հայրը՝ նախախնամութիւն է ընտանիքին, մայրը հոգիւն, կինը՝ դիտողին, եղբայրը՝ բերդն է ու զուակը անմահութիւնը ծնողքին, տղակը բոյնին ու ասոնք ամէնը պարփակող ընտանիքը՝ արհաշարքիւնը սիրտին, սերտէն առաքինութեան, բերովէն սրբութեան : Ով որ ճշմարիտ ընտանիքի մը ճշմարիտ անդամն է եւ հաց ու պանիր ունի՝ ուտելիք, առողջ ու վեհանմէ Ե, իր երկինքը գտած է . աւելին Թող չփափաքի : Փառապիրութիւնը՝ փորութիւն խոստով Ե, ոսկեպաշտութիւնը՝ հորութիւն է : Արժանիքը պարզ գեղեցկութիւնն է, առանց շղարշի ու փրկանքի հէպին : Արժանիք ժպտ մըն է, տիտղոսը ժանեակ մը : Ապերախը դեռ մըն է, փրկատիւն մարդ մըն է, բարեխաղը Աստուած մը : Դիտութիւնը գանձ մըն է, բարութիւնը գոհար մը, հարստութիւնը կախարդ մըն է, ոմանց դահիճը, քիչերու փրկիչը . չբաւորութիւնը կէս դժոխք մըն է, մոլութիւնը շուռաւոր միտ մը : Համեստութիւնը պատկը կնոջ, քաջութիւնը՝ գեղեցկութիւնը այր մարդուն : Ծաղը [Ֆիախչախան] անուշ է . ան-

կեղծ բարեկամը աւելի անուշ . նորածին մանկիկը քնուշ է , սիրտը աւելի ճնշուշ : Խղճի գոհունակութիւնը ներդաշնակութիւնն է հոգիին , երանութիւններու պտակը . վա- ելքը առաջարանը զործին ու վերջարանը բրտիւրին : Խաղը զործը մանուկին ու զոր- ծը խաղը մարդուն :

Առեւտուրին կանխիկը , հագուստին կո- կիկը , զգացումին փափկիկը գեղեցիկ են : Հպարտութիւնը յիմարութեան մոնետրին է , խնայողութիւնը խնատութեան շնորհքը : Շնորհքը ճշմարիտ գեղեցկութիւնն է ու գե- ղեցկութիւնը սուս շնորհք : Երեք բան չեն ուտուիր . կծու խաղ , կծծի հարուստը , կճող լեզուն : Չօյս բան կ'ուտուին . անկեղծ հոգիին , անուշ շեգուն , ինչ որ փառէ կա- կուշի ե ու կեղծաւորէ կարծր :

Ապրելու համար Սամիտանի բաշտութիւնը , Յորի համբերութիւնը , Սոկրատի իմաստու- ծութիւնը , Աբրահամի հաւատքը , Աննիբալի կամքը , Դաւիթի եռանդը , սղոյիկի մը պաղ- արիւնութիւնը , քմիւշի մը ճարպկութիւնը , Յիսուսի մը սիրտը պէտք է կրել : Անժամա- նալու համար մէկ ճամբայ կայ .— սիրտ շինէ , կեանք փրկէ , բարիք ըրէ : Ճակատագիրը վերջապէս ձեռք կը կապէ անոնց առջեւ . որոնց ձագճիկն փայլ փրճիկն ու սիրտին մէջ անպարտ աւին կայ . կեանքի պայմանները շղթաներն են անոնց . որոնք փրկեց դատաւիւր անոնց մէջ կ'անցնեն յուսահատ . իսկ մարտի- ներն են անոնց . որոնք յարատեւութեան արի- ութիւնը , ինքնապատահութիւն , անձի ու- ժին ներքին գիտակցութիւնը ունին : Կեն- ցադպրոտութիւնը էն փափուկ գեղարուեստն է ու կեանքը մաքրիւր արուեստներուն արուեստը : Ձմեռը ցուրտ է , ան- շնորհք մարդը աւելի ցուրտ . ասեղը կը խո- ցէ , քսուն կը խցտտէ : Կեանքը երազ մըն է . երազողին , զործ մը բրտնողին , հա- նելուկ մը մտածողին , վայելք մը զայն ապ- րիլ զիտցողին : Կեանքը գազանիք մըն է ծայրէ ծայր , մանգաղ մը սրածայր , ոմանց մեզ մըն է , ուրիշներուն շոգմզգ է , բիշերուն Աբրահամի զոգը . . . :

Բազդը մէկ աչքէն կոյր է , յիմարը երկու աչքէն : Եթէ ունի աւուրջոյթիւն ու աւափի- մոյթիւն՝ ունի ամէն բան . Եթէ չունի՝ ոչինչ ունի : Գրեւը սիրտին ծարգմանն է , նամակը պատգամաբերը : Բեկոր . ե նշխար խոճեր գրեցի , որովհետեւ կեանքն ալ ուրիշ բան չէ՝ Եթէ ոչ գոյւնարը բեկոր մտածումներու , նշխար զգացումներու եւ փշրանք զործերու : Համեմտեցր զանոնք ու կ'ունենար ինչպէս որ փեանիւր կ'ըմբռնէ : 3. ՊՈՒՃԻԳԱՆԵԱՆ

Հ Ր Ա Շ Ք Ը

[ԻՐԱՆԱՆ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ]

Գիւղի մը դպրոցին տանիքը , զիշեր մը , սարափելի փոփոխող գիշեր մը , կը փչի : Հետեւեալ առտուն , երբ աղաքը , վարժա- պետը՝ ցուրտէն սարսափէին դպրոց կու գան , ահաբեկած կը տեսնեն որ «գպրատուն»ին կործանած է : Անմիջապէս լուր կը տրուի գիւղին տէրտէրին և քանի մը ջոշերուն , որ- պէս զի ճար մը գանձի իրերու այդ ցաւայի վիճակին : Երկար խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան Ի՞նչ ընել : Ի՞նչ ընել . . . : Ուսումնասէր մարդիկ՝ սրբազոյծութիւն կը նկատեն՝ աղաքը մինչև իսկ օր մը առանց դատի ձգելը : Տանիքն ալ զժաւար կը շին- ուի . նախ ստակ հաւաքելու է , և ուրիշ տեղ ալ չկայ , քանի որ ամէն մարդ հազիւ իր զուգը մէջը խոնկու տուն մը ունի . ժողովուրդը հարուստ չէ , աւելորդ շէնքեր ու- նենալու համար : «Է՛հ , եկեղեցին Թոյ զան հիմակուհիմա , ուրիշ ճար չկայ» , կ'ըսէ ազգեցիկներէն մէկը , որուն ամէնքը համա- միտ կը գտնուին , բացի տէրտէրէն , որ բիշ մը կը մոլտայ , բայց ան ալ վերջապէս կը համոզուի , քանի որ իրաւ ալ , ուրիշ ճար չկար : Եւ հետեւեալ առտուն՝ աշակերտները եկեղեցին կը հաւաքուն : Տոցըը համար մեծ զէպը մը կ'ըլլայ ասիկա : Եւ Յիսուսին , Աստուածամօր , սուրբերուն աչքերուն ներքե կը շարունակուին աղայական չարանճիւ- թիւնները . օրինակի համար՝ յանցանք մը զործած աղկիւր բնաւ չվարանիր սուտ եր- զում մը ընել , աչքերը յառած խորանին խաչերուն : Այդ տարին ստատիկ ձմեռ մը ընելուն , աղաքը զրօտանքի համար դուրս հանել անկարելի կ'ըլլայ , և որչափ որ ալ կը արնի ինչո՞ք վարժապետը հանդարտու- թիւն պահելու՝ — տեղին սրբութիւնը միշտ միտքը ունենալով — աղան աղայ է , կարելի չըլլար , և երբեմն երբեմն գնդակ մը կ'եր- Թոյ—բոյրորովին ակամայ անշուշտ — պա- տէն կախուած մէկ սուրբին զլխուն վրայ ու- տում մը կ'ընէ , և խորանին աստիճաններէն զտարեւտվ վար կ'իջնայ . կամ, երկու աղա- զիրար հրած ատենին , մէկը կ'երմայ Աստ- ուածամօր առջեւ դրուած սեղանին կը գար՝

նուի, որուն վրայ խզաման մը կայ. ի՞նչ
կը թափի. . . : Եւ արձ փութէն. ետքը, երբ
քահանան կու գայ իր խուան եկեղեցին ընե-
լու, զժողովուրդին կը դիտէ որ՝ զքահայկին
տեղը փոխուած է, քանի մը ծնրադող ձե-
րուները ալ մէլանի բիծեր կը նշմարեն զե-
տինները : Բայց ի՞նչ ընել, համակերպելու
է. և զպրոցը տանակ մէկ երկու շաբաթ կը
շարունակուի : Բայց, զիւրին մէջ տարածայ-
նութիւն մը կ'ըլլայ որ, Աստուած սատակ
բարկացած՝ իր Տունը անտուակ աղոց իբր
զքոտարան գործածուելուն, եկեղեցիին մէջ
հրաշքներով կը յայտնէ իր զայրայթը : Իմա-
ցունելը կը զրգուտին, մանաւանդ երբ՝ քանի
մը խոտ փտանելի անձեր սարափահար կը
պատմեն Թէ, իրենք ալ տարօրինակ նշաններ
տեսնէին առջի որ իրիկուան ժամերգու-
մեան միջոցին . . . : Սուրբի զայնակու-
թիւն մը առաջ կու գայ մոլեռանդ ժողովուրդին
մէջ : Կիները կու լան և իրենց զաւակները
խոտափանջելու կը տանին : Տղաքը վախ-
ցած՝ զիշերները կ'երազեն որ եկեղեցիին
տուրերը իրենց շրջանակներէն վար իջած կը
չարարեն զիրենք : Ամէն մարդ սրտատրոփ
Աստուծէ իբր պատիժ գալիքին կը սպասէ :

— Աստուած իրաւ կը պատժէ կոր մեզ,
կ'ըսէ կին մը, այս առտու կովիքէս մէկ հա-
տը հիւանդ կ'երեւայ կոր :

— Զաւակս բերանը քան զրաժ չէ երկու
օր է, ա՛խ, ան վարժապետը, մեզքը խո-
թեց մեզ, կ'ըսէ արիւշ մը : Այդ օրերն ալ
օղը ա՛լ աւելի կը խոտանայ և կը սկսի
կարկուտ տեղալ. հողագործները այս կար-
կուտն ալ իրենց իբր պատիժ կ'առնեն, և
իրարանցումը տատիկ կ'ըլլայ զիւրին մէջ :
Ինչո՞ք վարժապետը տունէ տուն կը վազէ,
հանդարտեցնելու համար մոլորած միտքերը :
Ի զո՞ւր . . . : զիւրացիին մոլեռանդութեան
հետ կը խաղացուի :

Վերջապէս, զիւրին լուսամիտներէն և
ազդեցիկներէն քանի մը հոգի, կ'որոշեն որ
երթան և ուշի ուշով քննելով խնդիրը հաս-
կնան Թէ իրա՞ւ տանակ բան մը կար : Եւ
այդ տարածայնութենէն քանի մը օր ետքը,
շաբաթ իրիկուն մը, ամբողջ ժողովուրդը,
մեծ ու պզտիկ, եկեղեցի կը խումէ : Քա-
հանան զողալով կը սկսի Աւետարանը կար-
դալ . ամէն շրթունքի վրայ սղօթք մը կայ :

բոլոր պէքերը եկեղեցիին չորս կողմը կը
պրպտեն նշան մը տեսնալու . . . : Յանկարծ,
անագին ազմուկ մը կը փրթի. — Կին մը, խո-
րանին վրայ գանուող խոշոր պատուհանէն,
ուրիշ լոյսի հեղեղ մը կ'իջնար խորանին վրայ
և կը բոցավառէր արծաթեայ Ս. Թաշեկութիւնը,
մարդկային զուլիս մը տեսած էր, որ երեւցած և
անյայտ էր եղած : «Հրա՛շք, հրա՛շք, կը պոռան
ամէնքը. ծայր տուած խուճապը աննկա-
րագրելի էր. ժողովուրդը եկեղեցին թողած
կը փախչի տարափահար : Հրաշքը տանող
կինը գետինը ինկած կը պոսայ. «Խուրցանք,
կուրցանք, Աստուած իմ, մեղայ . . . : Խուճե
մը մարդիկ վարժապետին վրայ խոյսցած
էին : Քահանան ո՞ր էր. Աւետարանը մէկ
կողմ նետած անհետացած էր. — ամէնէն
առաջ զուլիս վազողը ան էր եղեր : «Հրաշք,
հրաշք, Աստուած, ներքէ՛ մեր մեղքերուն»
կ'աղաղակէր ժողովուրդը լալազին, փողոց-
ներուն մէջ ծնրադրած, մինչ ձիւն ու կար-
կուտ կը տեղար տաւա և հովը կը փչէր, կը
փչէր մոլեգնօրէն . . . : Բայց, լուսամիտ-
ներու խումքէն մէկը անմիջապէս մէջ նետ-
ուելով, կ'ըսէ. «Ի՞նչ ըսել է, եղբայր, ևս
այս բանին չեմ հաւատար. Երթանք տես-
նենք իրա՞ւ տանակ բան մը կայ. ո՞վ հետս
կու գայ» : Հինգ վեց հոգի կը միանան այս
խօսքերը ըսող երիտասարդին : Զարմանալի
ճարտարապետութիւն մը ունէր այդ եկեղե-
ցին. պատերուն մէջէն նեղ ճամբաներ շէն-
քին զանազան կողմերը կ'առաջնորդէին և
մէկ ճամբայ մըն ալ զէպի հրաշքին երեւցած
պատուհանը կը տանէր : Մարդիկը խոշոր
լապտեր մը կ'առնեն և կը մտնեն այդ ման-
ուածապատ ճամբաներուն մէջ : Թէև բաշ կը
ձեւանան, բայց ներքնապէս վիճակին գէշ
էր. իրաւ, Թէև լուսամիտ էին, բայց, Է՛հ,
մարդս տկար է. իրաւ կարծես Թէ Աստու-
ծայ մասը ըլլալ կը Թուէր այդ գործին մէջ :
Քանի՞ քաղէին՝ զողերնին աւելի կ'աւելնար.
սիրտերինն այնչա՛փ ուժգին կը բարախէր որ՝
ձայնը պիտի լսուէր, և Թէ հաստ մուճակնե-
րուն հանած աղմուկը չըլլար քարերուն վրայ :
Անգամ մը ժամկոչին սրունքները վախէն
այնչա՛փ կը կծոտին որ՝ կը սախալի վայր-
կեան մը լապտերը վար զնել. — արդէն ան
ինչնաբերաբար եկած չէր. խեղճ Աստու-
ծավախ մարդը, լապտերը բռնելու համար

ստիպեր էին որ հետ գար . «Մեղայ՛, մեղայ՛ , Տէր» , կը մոլորար անդադար :

—Մի՛ վախ՛նաք , աղաք , մի՛ վախ՛նաք , կ'ըսէր մէջերնուն էն քաջը : «Ես ա՛լ տակէ անդին չեմ երթար» , կ'ըսէր մէկը . բայց եկուր տես որ միտակը ետ դառնալու ալ կը վախ՛նար . . . :

Վերջապէս ճամբան սկսաւ լայնալ եւ աղօտ կերպով մը լուսաւորուիլ : «Հասանք , հասանք , սիրտերնիդ ամուր բռնեցէք . ժամկոչ աղբար , սա լապտերդ ցցո՛ւր» : Մէկ մըն ալ , սարսափահար , ճիշդ պատուհանին վրայ պատկած մարմին մը կը նշմարեն , որ ոտքերը դէպի իրենց կողմը երկնցուցած էր և ձեռքերը տարածած . զլուսը մռնին մէջն էր :

Սրտատրոյի , կ'առաջանան , կը մօտենան , պատկած մարմինը դիրքը չէր փոխեր : «Կեցէք նայիմ , տղերքք» , լսելով , ժամկոչ աղբարը մարդուն քովը կ'երթայ և ոտքն քաշելով ասդին կը դարձնէ . —Խաչօն էր , Խաչօն՝ Տէրաէրին տղան , որ քանի մը օրէ ի վեր այս խաղը կը խաղար իր հօրը հօտին :

ՄԱՆՆԻԿ Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՎԵՋԻՆԸ

[ԲԱՍՏԵՐ]

Զմայելի կախարդ նկարիչ մը տեսայ ես այս օրերս . մոզական վրձին մը ունի : Իր նկարները ա՛յնքան բնական , ա՛յնքան կենդանի ու վառ որ կը զրդուիմ ըսել և ոչ մէկ վրձին խել կրցած է աւագ մրցանակն իր ձեռքէն : Ո՞վ է ան , ի՛նչպէս կը նկարէ , քիչ է իր տեսարանը , իր վրձինը , որո՞նք իր երանգները :

Բնութիւնը իր բիւրատեսակ բներեւոյթներովը , շրջափակ , սար , լեռ ու դաշտ , ծառ ու շէնք՝ նմուշներն են իր աչքին դէմը կախած . շող , ամպն ու կայծակը , անձրեւն ու ձիւնը՝ չիր վրձինները առանձին , բնատիպ ու ինքնաշարժ : Բնութիւնը ամբողջ իր առջեւը դրուած նկարն է . նկարիչը՝ ինքն իսկ Բնութիւնը համեմատաբար , զոր Մայր կը կոչենք :

Գծեր պրծեր է նկարը կապոյտ խորութեան ծալքերով . սղոցակատար սարերը վրան ցցուած , ծանձրացած , դաշտ ու արաւորը անկեղծիք փռուած ոտքին ու քղանցքին շուրջը հող ու կանխնայով երանգուած : Ու թէ որ կ'ուզես ծովի պատու մըն ալ կապտածիր ծիւռն ու ծառալ :

Յանկարծ օղեղէն անօր երանգապնակն երկնային բարձրութիւններուն վրայ՝ Բնութիւնը կը շարժէ իր վրձինը մոզական , կը յուզէ , կը թրէ , կը հիւսէ ուզած գոյնները ազդու , և վարպետի անվրէպ թափով կը հագցնէ նոր տարագ մը՝ պահիկ մը ստաշ աւարտած բնանկարին խոճը կը թափէ , կը մշուշէ կամ կը եղծէ խալտ՝ ծառ , շէնք , սար , ձորակ ներկոտ վրձինին տակ ծնփելով . . . Դու կ'ասես թէ հինին վրայ նոր ծեփ մը քսեց , մոլեց ու նորեց , կամ կը լուսէ վառ գոյն մը փողփողուն , վեռնիւն ալ մէջը խառնած , ոսկի վրձինի մը ծիրան մազերովը կը շողացնէ խորանկար մը արեւոտ ու կենսքոտ . հարթանկար մը կապոյտ կամարով , կրկնաւարկայլ ծառաւ սարերով և զմրուխտի կանաչ ծովակով մը մեղմաւիւր :

Քիչ վերջը զաւարթի թափով մը , — արեւոտագէտի դժուարահաճ բնոյթ , — իրար կը խառնէ՝ հովի մը շաղկիչ ծնւերովը՝ երանգները ամբողջ հսկայ պնակին , — շո՞ղ , ա՛մպ ու թամա՛ռ : Եւ կը տեսնես որ քանի մը զօրեղ գոյններու խառնուրդ՝ տեղին նոր երանգ մը կու տայ բնաշունչ իր վրձինին բերանը , կը տեղայ շաղբ մը սանտրած , շամփուր շամփուր իշւած , կայծակի լայն շեղի մըն ալ աղեղէն փրծած նետի պէս ընխածուն՝ դէ՛մաւ դէ՛մ ու վրան պահ մը ստաշ երկնած աղուոր վառ նկարին . . . — Ոսկէշող արեւոտ նկարը մալլ փոծորկի զլուս-գործոց մըն է դարձեր :

Երբ այս քնայն ալ անցնի՝ հմայիչ , փուկ վրձինը Մեծ Բնութեան , որ կ'առես թէ ունի երանգ տալու և երանգը շողացնելով ետ առնելու անգիւտ յատկութիւն մը դիւմակնա՛ն կը թողու այս անգամ իր պատկերակալին վրայ հիասթափ աչքերու համար բո՛ւ լորովին նո՛ր նկար մը կատարուն . — Բանի մը պատառ արցունքոտ ամպե՛ր հողմավար , մէկ քանին՝ տարին զլսո՛ւն փաթածուած , և սարը կապուտ-մապուտ լուացուկ , կաս-կապոյտ դրած երեսով՝ դէմքիդ դէմը լայնա-նիստ :

Կը նայիս ու կը դիտես քուկդ ալ փղծուէն աչքերուդ . զիտես թէ Բնութիւնը լացեր ու լուացք է ըրեր զլսէն մինչև ոտքերը կապ մը լեզակի շուրով , երկի՛նք մը ցօղի ցնցուղով . . .

Հապա՛ երբ գօտի մըն ալ կը պարզէ վեր զոյգ մը հովբերուն , — հարաւին ու հիւսիսին — կամար ու կարմուռ կապած , եօծնա-գոյն հիւսած , կամ ի պար կը հանէ կապոյտ մարդերուն վրայ ամմուռն հարաւը երկնային , շողոտ , խաբուսիկ ու անգայտ . . .

Այս ամէնը շնորհքն ու մենաշնորհն են Բնութեան վրձինին :

ՏԻԳՐԱՆ ՉԻԹԱՅԱՆ

Հիմնադիր Կ. Ս. ԻԻԹԻԻԺԱՆԻ , Արտգրաւոր ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ : Տպագր. ՃԻՀԱՆ

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆԵՐՈՒՆ

Հեղինակներէ և հրատարակիչներէ սննդք՝ որ կը բաղձան Մաւիսի մէջ ծանուցուիլը իրենց հրատարակութեան, պէտք չէ մոռնան մեր պայմանը թէ, 2 օրինակ զրկուած գիրքերը միայն նկատողութեան կ'առնուին և կը ծանուցուին :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական .— Բա-
րանորդադրութիւն Կ. Պոլսոյ համար՝ տարեկան 80, վեցամսեայ 45
դրչ. : դաւաններու համար՝ տարեկան 108 դրչ. : վեցամսեայ 60 դրչ. :
և օտար երկիրներու համար՝ տարեկան 35 ֆր. : վեցամսեայ 20
ֆր. : Զուգեք վաճառում՝ Տաշք փարս : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ
կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ըն-
տիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :
ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխա-
տակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին
մէջ, արժանացած՝ ընթերցողներու գնահատմանը, իր առաւելութիւններէն
մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՂԱՎՈՒ հանգամանքը, որով իր ընթերցողնե-
րուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տե-
սարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուած-
ները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւարական, եր-
կրագործական, իրաւարանական և այլն, բացի գրական, բանասիրա-
կան գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւն. : ԱՐԵՒԵԼՔ վերաբերեալ
ամէն գրութիւն և բաժանորդագին ուղղել Տէր և Տնօրէն Գառնգին
էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճաւոտէսի, ուր կը
գտնուին թերթին Տպարանը և Խմբագրատունը :



Je prends tous les jours
de la vraie
CREME DE MORUE
de la Ph^{ie} PEQUART-VERDUN-s-Meuse
C'est très bon !!!
Peute mère, se méfie des produits
similaires; mauvais et digérant mal.
Le Flacon : 3^{fr} 50 dans t^{tes} Pharm^{ies}.
* SUPERIEURE à L'HUILE de FOIE de MORUE et aux EMULSIONS. *

Նշանաւոր Տոքթ. Բէքառի
այս էմուլսիօնը կը դերա-
զանցէ հրատարակի վրայ
գտնուած լուր իր նմաննե-
րը : Զուգի իւզի տեղ կը գոր-
ծածուի և անկէ աւելի
օգուտ ունի աղոց և տկար

անձերու : Միակ ներկայացուցիչ Թուրքիոյ . Ո. Սօլախեանց, Կ. Պոլիս :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋՈՒՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարձանէ ամէն տե-
սակ ահւառի և լինտի հիւանդութիւնները, վտած ահւանները կը լեցնէ՝
առողջ ահւաններու պէս երկար ատեն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նորը, ճաշակաւոր և գիմացկուն
արուեստական ահւաններ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարձանատան մէջ, Բերա, Մեծ
Բարձաք-Գաբու, Թիւ 8 : Կարօտ հիւանդները ձրի կը դարձանէ հինգ-
շաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարձանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունի :

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ [Քրիստիկոսական էջեր]

Լեւոն Էֆ. Տէյրմէնճեան, որ գրաւմատական և տպագրական գործերու մէջ երկարամեակեայ փորձառութիւնն ստացած է, այս անգամ Պատը Ալի ճատտէօի ձրգալ Օղլու փողոցը նոր գրատուն մը հաստատած է՝ «Քրիստիկոսական էջեր» անունով, ուր կը ծախուին թուրք, հայ, և ֆրանս. գիրքեր։ Կը տպագրուին՝ քամպիտլ, նամակի և պահարանի զլուխներ, մահազլներ, հարսանեկան հրաւիրագիրներ, այցաքարգեր եւ այլն։ Կը կազմուին՝ խնամուած կերպով ամէն տեսակ՝ գիրքեր եւ լրագիրք հաւաքածոներ եւ այլն։

Խիս գիւրամասշնիկ տպագրութիւն

Անոնք որ այս գրատունին հետ զործ ունենան, փորձով պիտի համոզուին Տէյրմէնճեան Էֆ.ի ճշգրտագնութեան եւ յանձնարարութիւններուն արագ ու ճշգրիտ գործադրութեան։

ԾԱՂԻԿ տղոց շարաթափերթ . — Կը հրատարակուի տղոց և դպրոցականներու յատուկ նիւթերով, Սաբայեան խնամուած տպագրութիւնով։ Տարեկան բաժանորդագրութիւնն է 30 զրշ.։ Տնօրէն՝ Սաբայեան։ Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչունլու կոն, թիւ 7, ուր պէտք է ուղղել նամակ, բաժանորդագիր կամ որ և է գրութիւն։

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծանօթ առաջնաբաժնի Սաչիկ Էֆ. Ժամկոչեան՝ պատիւը ունեցած է անգլիացի արկիւնէ մը ստանալու հետեւեալ նամակը .

Սիրելի Տէր . —

Ծնորճադարա եմ Ձեզի որ՝ Սկովտիոյ և Մատչուսէթի մէջ տարիներով զարմանել տալ չկրցած տկուաներս՝ հիմապէս բուժել յաջողեցաք։

Տիկին ԱՆՆԷԹԱ ՄԱՅԼԱ

ՄԱՐԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Առաջնաբաժնի՝ ՏՕԷԹ. ՅՈՎԱ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Այս հատորը՝ գիրահատկեալի լեզուով և եզանակով ծանօթութիւն կու տայ մարդկային մարմինին կազմախօսութեամբ և առողջապահութեանը վրայ։ Զերմացէս յանձնարարելի է ամէն բնութեան և ամէն անհատի, քանի որ մարմնական առողջութիւնը, առաջին պայմանն է կեանքի երջանկութեան։ Կազմակերպութեամբ մանաւանդ յարմարագոյն նուէրը՝ իր մաքուր տպագրութեամբը, բազմաթիւ պատկերներովը եւ ընտիր կազմովը։ Վաւերացուած է Ուսումն. կործուրդէն՝ իր գտագիրք բարձրագոյն և լրացուցիչ գաւընթացքներու ուսանողներու։ Գլխի 10 դրոշ։ Կեդրոնառակի՝ Յ. Մատթէոսեան թղթաւմատատուն Ամերիգան կոն, Կ. Պոլիս։

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Գեղեցիկ տղադրութիւնով, զեղարուեստական կողքով, զրական հրապուրիչ ներքինով: Օրուան գիրքը և ամէնէն խօսուած հրատարակութիւնը: Էջ 280: Գինը՝ 7 դրշ.: Կեդրոնատեղ՝ Սթամբուլ, Շիրին խան, թիւ 7, Օսմանի և Բնի: Կը գտնուի ամէն զրավաճառի քով:

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՊԷՇԵԱՆ. ԱՄՍՍԻՍ: Ամասիայի և չրջականե-

րու զրական պէսքերուն լիովին գոհացում տալու համար է որ հիմնուած է այս նոր գրատունը, ուր գիտակից խնամքով կը պատրաստուին արուած բոլոր յանձնարարութիւնները: Մասնատրտապէս յանձնարարելի է այս գրատունը բոլոր ուսուցիչներուն ու գրասէրներուն, իւր միակ կեդրոնատեղ լաւագոյն գտնադիրքերու և լաւագոյն հրատարակութիւններու:

Միայն տատան Հայաթերթը, կը հրատարակուի արշալոյսին, և առտուն խիստ կանուխ՝ կը գտնուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հետադիմներ, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, զրական, տնտեսական և ընկերային յօդուածներ: Զորեքչաքթի և չաքաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և զրական գրուածքներու: Գինն է 10 փարա: Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 դրշ., Կալատ՝ 108; արտասահման՝ 25 ֆր.: Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, Կալատ՝ 60, արտասահման՝ 18 ֆր.: Ամէն գրութիւն ուղղել Տէր և Տնօրէն Յովհաննէս Ֆ. էֆ. Գայսէրեանի հասցէին՝ 38, Պապր Ալի Ճատտէսի:

Դպրոցներու համար անհրաժեշտ
Դրասկենակներու համար Կարեւոր
«Մաշոն»ներու համար գեղեցիկագոյն՝ զարդը՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ

Հրապարակ ելաւ՝ վաւերացուած Հանր. Կրթութեան նախարարութիւնէն: Վարժարաններու վարիչներուն, բոլոր ընտանիքի հայրերուն և հայ վաճառականներուն կը յանձնարարուի մէյ մէկ հատ գինը այս կարեւոր և գեղեցիկ զարդէն: Գինն է չրջանակով 85, առանց չրջանակի 65 դրշ. գտառներու համար՝ իւր անտուկի և փոխադրութեան ծախք 15 դրշ. աւելի: Դիմել՝ Պապր Ալի Ճատտէսի, թիւ 56, Յովհ. էֆ. Աղնաւորի «Օսմանլը» Գրատունը:

5ԲԴ ԳԵՂԱՐՈՒՆԵՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ «ՍԻՆԿԷՐ»

Բերա, Մեծ-Փողոց, Թ. 343, Ա. Յարկ

Ամէն օր քաջ է

Մ Ո Ւ Տ Ք Ը Ջ Ր Ի

Ա. Կարգի մրցանակ հետեւեալ ցուցանադէպներէն. Բարիկ 1900, Ան-Լուի 1904, Միլան 1906, Պոլսա 1906:

ՄԱՍԻՍ, Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւառներու համար տարեկան 60 դրշ :

Արտասահմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները ,

միշտ ձրիաբար , թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է :

Դրամ կարելի է զրկել փոխանակազրկով , օսմանեան կամ

օտար մանսա-փօսքով և օսմ. թղթատարական նամակադրոշ-

մով , 20 հաւը մէկ մէճիտի հաշիւով :

Չհրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է դրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ, Ի Հասցէով

Պապը Ա. Ի Ճաւսէսի , Թիւ 38

درعليه باب عالی جاده سنده نومرو ۳۸ «ماسيس» غزتهسى اداره خانهسى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

“ՄԱՍԻՍ”-ի Նոր Շրջանի Ա. Տարիի հաւաքածոն, որ 1000 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ , հրնայ ստացուիլ Խմբագրութենէս , կանխիկ փոխար-
ժէովը՝ 60 դրշ. . կազմուած 65 : Թղթատարով ղրկուելիք
Հասցեներու համար պէտք է 5 դրշ. աւելի վճարել :

Ն Ո Վ Ք

Նոր Տարուան առաջին նորոքիւնը

Յ. Գ. ՓԱՆՍՆԱՆՆԱՆ

Գ Ա Ն Ձ Ի Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Այս գիրքին համար յատկապէս փորագրուած 300 պատկերներով .—
Անմիջեւիօրէն ընտրելադոշն Դասագիրքը՝ Տարր. Դասընթացքի երկսեռ
աշակերտներու համար : Դին 5 դրշ. Կեդրոնատեղին է հեղինակին ԳԱ-
ՐՈՒՆ Գրատունը , Կ. Պոլիս , Մեծ Նոր խան , Վերի յարկ , Թիւ 55 :